

ԿՐԻ 14-00-120
ԿԴՆ 12112243



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

«22» 05 2004 Վր.

N..... 05-9

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 11-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով հ Ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի <<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և համայնքային ծառայողների առեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու կարգը հաստատելու մասին>> N 11-Ն հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հավելվածի 6-րդ կետում <<համայնքի ղեկավարի նստավայրում (Երևանում Երևանի քաղաքապետարանում)>> բառերը փոխարինել <<քաղաքապետարանում (գյուղապետարանում)>> բառերով.

2) հավելվածի 8-րդ կետում <<համայնքի ղեկավարի աշխատակազմը (Երևանում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը)>> բառերը փոխարինել <<Քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմը>> բառերով.

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:



Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ